«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝«Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»

Դաստիարակ՝ Կարինե Սուքիասյան

Մանկապարտեզ՝ «ՀՀ Տավուշի մարզի, Այրում քաղաքի մանկապարտեզ »՝ ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3-4

Գլուխ 1: Հայրենասիրական երգերի ուսուցման դաստիարակչական նշանակությունը 5-6

Գլուխ 2: Խաղը որպես գործունեության առաջատար ձև նախադպրոցական տարիքում: Խաղային տեխնոլոգիա 7-9

Հետազոտական մաս..... 10-12

Եզրակացություններ 13

Օգտագործված գրականության ցանկ..... 14

Ներածություն

Հետազոտության թեմայի արդիականությունը: Մեր երկրում սաների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ:

Ժամանակակից հանրակրթության հրատապ խնդիրներից է՝ սովորողներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում՝ հայրենասիրական երգերի կատարողականն ուսուցանելիս:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Ներկայումս կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Ուստի 21-րդ դարում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել հայրենասիրական երգերի ուսուցումը երաժշտության դասին, ինչպես նաև խաղերի ուսուցման միջոցով:

Հետազոտության վարկածը: Հետազոտության նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրել ենք հետևյալ վարկածները.

1. Ուսումնասիրել քննարկվող հարցի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
2. Հիմնավորել հայրենասիրական երգերի ուսուցման դաստիարակչական նշանակությունը:
4. Խաղերի ուսուցման միջոցով բացահայտել հայրենասիրական դաստիարակության գործում դրանց արդյունավետությունը և դերը:

Գլուխ 1: Հայրենասիրական երգերի ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Երգը վաղուց է ճանաչվել որպես հայրենասիրական ոգի դաստիարակելու արդյունավետ միջոց։

«Հայրենասիրությունը սահմանվում է որպես ազնիվ սեր դեպի հայրենիքը, հայրենի հողը, դեպի հայրենիքը՝ որպես ծննդավայր կամ երկիր, որն ընդունել է անհատը և որպես այդպիսին ճանաչվում է նրա կողմից՝ ըստ պատկանելության ներքին զգացողության, որպես բարոյական սկզբունք, նորմ և զգացում, որն առաջացել է դեռևս մարդկության ձևավորման փուլում» [1]:

Երեխայի համար հայրենիքը սկսվում է տանից, հայրենիքի և նրա ավանդույթների հանդեպ սերը ներառված է «հայրենասիրություն» հասկացության մեջ։ Հայրենիքի և նրա հերոսների պատմության հետ ծանոթությունը սկսվում է դաստիարակչական գործունեությամբ, որը ներառում է տարբեր մեթոդներ՝ դիտումներ, զրույցներ, էքսկուրսիաներ, ժամանցի երեկոներ, տոնական համերգներ, հայրենասիրական երգերի փառատոներ։

«Երաժշտություն» առարկայի ներկայիս երգացանկում ընդգրկված հայրենասիրական երգերի նշանակությունը որոշելուց առաջ նախ պետք է կանգ առնել հենց հայրենասիրության հասկացության վրա։

Վերջին տարիներին հայրենասիրությունը Հայաստանում ամենաարդիական թեմաներից մեկն է, որը լայնորեն քննարկվում է տարբեր ոլորտներում։ Հայրենասիրական երեգերի շարքում դաստիարակչական մեծ ներուժով են օժտված հայրենիքի, զինվորի մասին քայլերգերը, ռազմի երգերը: Նվիրվածությունը սեփական ժողովրդին, հայրենի երկրին, ազգին ու ազգայինին խիստ կարևոր է կրթվող յուրաքանչյուր հայ մանուկի համար: Հենց հայրենասիրական երգերի ուսուցման ճանապարհին են դրվում հայեցի դաստիարակության, հայրենիքի հանդեպ սիրո և նվիրումի, հայրենանվեր անձի ձևավորման հիմքերը: Ուստի երաժշտության ուսուսցման գործընթացում հայրենասիրական երգերի ուսուցումը պետք է նպատակաուղղվի հայրենիքի շահերի պահպանման համար երեխաների մեջ սխրանքների պատրաստակամություն և հայրենիքի պահպանության կարևորության

գիտակցում ձևավորելուն, հայ զինվորի ու հայ քաջերի սխրանքների, հայրենանվեր ու հայրենապաշտպան օրինակելի արարքներն արժևորելու կարողության ձևավորման նշանակալի գործին: Պատահական չէ, որ սերը սեփական երկրի հանդեպ, նրա շահերի պաշտպանությունը ներառված է մեզ ծանոթ և այդքան հաճախ հնչող ու կրկնվող «հայրենասիրություն» հասկացության մեջ:

Դաստիարակչական ազդեցության առանձնահատուկ ներուժ ունեն հայրենասեր զինվորների երգերը, որոնց ունկնդրման և կատարման միջոցով երեխաներին են փոխանցվում հայրենանվեր զինվորի ոգին, տոկունությունը, կամքը: Բանակի, զինվորի թեմաներով քայլերգերն արթնացնում են երեխաների պայքարող ոգին, հայրենի երկրի պաշտպանության սուրբ գործին միանալու, հայրենասեր զինվորների նվիրական գործը շարունակելու և բանակի ամուր հիմնասյուներից մեկը լինելու նրանց ցանկությունը, հայրենի երկրի փոքրիկ պաշտպանը դառնալու, թշնամու առաջ չընկրկելու կամք և ձգտում ձևավորում:

Գլուխ 2: Խաղը որպես գործունեության առաջատար ձև նախադպրոցական տարիքում: Խաղային տեխնոլոգիա:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղի հիմնադիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և հոգեթերապևտներին: Քննարկելով խաղային գործունեությունը տարբեր տեսանկյուններից գիտնականները միահամուռ նշում են, որ խաղը մարդկային մշակույթի համակարգի ուրույն և անբաժանելի մասն է: Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցահասակ երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանկավարժներ՝ Յ. Ա. Կոմենսիկ, Ժ. Ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը, Կ. Դ. Ուշինսկին, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Առ. Բահաթրյանը, Ս. Արղությանը, Ս. Բաբայանը և այլոք: Խ. Աբովյանը հորդորում էր մանկավարժներին «չզրկել երեխային անմեղ խաղերից»: Իր «Պարապ վախտի խաղալիք» աշխատության մեջ նա կարևորում է երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկան խաղերի դերը: Մեծն Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»: Հավաքելով և մշակելով ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը Հ. Թումանյանը մշակում է երեխաների համար հայրենագիտական խաղեր և վերլուծում նրանց մանկավարժական արժեքը երեխայի միտքը և բարոյականությունը զարգացնելու գործընթացում: Հ. Թումանյանի կողմից մշակած խաղերի մեծ մասը տարբերակված ձևով առ այսօր օգտագործվում է նախադպրոցական դիդակտիկայում: Դրանցից են. «Գույների խաղը», «Աստղերի խաղը», «Տառերի խաղը», «Հայկական առածների լոտո» և այլ օրինակներ: Խաղի էությանն ու յուրահատկություններին անդրադարձել է հայ մանկավարժական մտքի խոշոր ներկայացուցիչ՝ Ղ. Աղայանը: Նա գտնում էր, որ երեխաներին հրապուրում է շրջապատողների գործունեությունը, և նրանք ցանկանում են վերարտադրել այդ իրենց խաղերում՝ ընդօրինակելով մեծահասակներին: Ղ. Աղայանը նկարագրում

է տարբեր միջավայրերում ապրող երեխաների խաղերը և գալիս եզրակացության, որ դրանք արտացոլում են իրական կյանքը։ Ղ. Աղայանը կյանքի է կոչում նախադպրոցականի դաստիարակության «լավ երգի և խաղի» սկզբունքը։ Հետաքրքիր են և չափազանց արժեքավոր նախադպրոցական դաստիարակության վառ ներկայացուցիչ, Թիֆլիսի ֆրյոբելյան մանկապարտեզի տնօրեն՝ Սոֆյա Բաբայանի մանկավարժականմոտեցումները։Նա իր բազմաթիվ հոդվածներում առանձնահատուկ կարևորում է խաղի դերը երեխայի զարգացման գործում և տալիս գործնական խորհուրդներ մանկավարժներին և ծնողներին երեխաների խաղը ճիշտ կազմակերպելու և ղեկավարելու համար։ Ս. Բաբայանը գտնում էր, որ խաղը պահանջում է ամենայն ուշադրություն, լուրջ և նրբանկատ վերաբերմունք։ Խաղի հետաքրքիր վերլուծություն է անում հայ մանկավարժ-հոգեբան Առ. Բահաթրյանը, նշելով, որ ոչինչ չի կարող զարգանալ առանց գործողության, իսկ խաղը՝ երեխայի լավագույն գործողությունն է։ Այն երեխաները, որոնք չեն խաղում, ըստ Առ. Բահաթրյանի, նման են, պարզապես,
«ծերացած մանուկների»: Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում մանրամասն ուսումնասիրվել ու քննարկվել է խորհրդային մանկավարժության ու հոգեբանության ականավոր գիտնականներ՝ Լ. Ս. Վիգոտսկու, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտյևի, Դ. Բ. Էլկոնինի, Լ. Ա. Վենգերի, Դ. Բ. Մենջերիցկայայի, Ռ. Ի. Ժուկովսկայայի, Ա. Պ. Ուսովայի և ուրիշների կողմից։ Նրանք խաղը դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման ինքնահաստատման և ինքնակատարելագործման կարևորագույն միջոց։ Նշում են խաղային գործունեության պատմական ծագումն ու սոցիալական բնույթը։ Խաղի ժամանակակից տեսությունը կառուցվում է խորհրդային հոգեբանամանկավարժության տեսական դրույթների հիման վրա, որոնք լրամշակվում են մանկավարժական նորագույն մոտեցումներով։ Համաձայն նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի, խաղն իրենից ներկայացնում է ինքնարժեք գործունեություն, որը շնորհում է նախադպրոցահասակ երեխային ներքին ազատություն և ինքնուրույնության զգացողություն, ցանկալին իրողություն դարձնելու վստահություն, իրականության իր տեսանկյունից նշանակալի կողմերը կրկին վերապրելու,

հաճույք և բավարարվածություն զգալու լայն հնարավորություններ։ Խաղային գործունեության ընթացքում երեխայի համար ստեղծվում են լավագույն պայմաններ (ազատ և բնական միջավայր, հուզական ներդաշնակություն, հավասարության մթնոլորտ)՝ հասակակիցների միջավայրում «այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու համար։ «Այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու հնարավորությունը երեխայի խաղային գործունեության հիմնական դրդապատճառն է, հետևաբար և երեխաների խաղային գործունեության կազմակերպման և կառուցման գլխավոր սկզբունքը։ Յուրաքանչյուր խաղացող երեխա առաջին հերթին ջանում է ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում, և խաղի առավելությունը, մանկան գործունեության այլ ձևերի համեմատությամբ այն է, որ խաղում կան ինքնահաստատվելու բոլոր հնարավորությունները։ Խաղային գործունեության նշված բնութագիրը խոսում է այն մասին, որ այն իրենից ներկայացնում է ներքին պահանջմունքներով պայմանավորված գործունեություն, որն ունի յուրաքանչյուր երեխայի համար սուբյեկտիվ՝ ներանձնային նշանակություն և արժեք։ Խաղն, իսկապես, ինքնարժեք գործունեություն է և բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում։ Որևէ այլ գործունեություն չունի խաղային գործունեության նշված առավելությունները։ Այսպիսով, խաղային գործունեությունը նախադպրոցականի անձնավորության կայացման ներքին գործոն է, որը չի կարող ամբողջապես բացատրվել և ընդհանրացվել, այն բավական սուբյեկտիվ է։ Միևնույն ժամանակ, խաղային գործունեությանը բնորոշ է օբյեկտիվ մանկավարժական նշանակություն։

Հետազոտական մաս

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հայրենասիրական դաստիարակության մեջ մեծ ազդեցությամբ են օժտված նաև հայրենիքի գովերգման երգերը, որոնցից հատկանշական է ՀՀ պետական օրհներգը, ուր պատկերավոր ընդգծված է հայրենիքի անկախությունը, ազատությունը, դրոշի կարևորությունը և այլն:

Մեր հայրենիք, ազատ , անկախ
Որ ապրել է դարե դար
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա եղբայր քեզ մի դրոշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լուսացի:

Նայիր նրան՝ երեք գույնով,
Նվիրական մեր նշան
Թող փողփողի թշնամու դեմ
Թող միշտ պանծա Հայաստան:

Այսինքն՝ հայրենասիրական երգերը՝ հայրենի բնօրրանի և հայրենիքի հետ կապված այլ երևույթների հետ, երեխայի մեջ արթնացնում են այն լավ ու բարի հատկանիշները, որոնք պետք է դառնան հիմք, հիմնասյուն և որի վրա պետք է կերտվի ու վերաշինվի սիրո զգացումն առ հայրենիք ու հայրենի եզերք: Հայրենասիրության զգացական ընկալումը ապահովվում է հենց երաժտության միջոցով, քանի որ այն հեշտությամբ ներթափանցում է երեխայի հոգևոր աշխարհ, իսկ երգի տեքստի գաղափարը վերհանվում է երաժշտության ունկնդրման, երգ ու պարի, նվագակցության ուղեկցությամբ: Նման մոտեցմամբ հայրենասիրական երգերի ուսուցումը մեծացնում է դրանց դաստիարակչական նշանակությունը և

երեխայի մեջ հայրենասիրություն դաստիարակելու ու այն նրա հոգեկերտվածքի մի մասը դարձնելու լավագույն միջոց է դառնում:

Ժամանակակից մանկավարժական տեսության մեջ խաղը համարվում է նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեություն: Խաղի առաջատար դիրքը որոշվում է ոչ թե երեխայի հատկացրած ժամանակով, այլ նրանով, որ. այն բավարարում է նրա հիմնական կարիքները. խաղի աղիքներում ծնվում և զարգանում են գործունեության այլ տեսակներ. Խաղն ամենից շատ նպաստում է երեխայի մտավոր զարգացմանը: Խաղերը տարբերվում են բովանդակությամբ, առանձնահատկություններով, երեխաների կյանքում զբաղեցրած տեղով, դաստիարակությամբ և կրթությամբ:

Մենք իրականացրել ենք հետազոտություն, կիրառելով խաղային տեխնոլոգիա, որը ներկայացնում ենք ստորև.

Դիդակտիկական խաղ «Մեր երկրի զինանշանը»

Նպատակը. համախմբել երեխաների գիտելիքները զինանշանի մասին, կարողանան տարբերել զինանշանը այլ նշաններից, իմանան որ զինանշանը պատկերված է մանրադրամների վրա, իրենց ծնողների անձնագրերի վրա և կառավարական շենքերի վրա:

Անհրաժեշտ պարագաներ՝ անձնագիր, զինանշանի պաստառ, մանրադրամներ, մատիտ, սոսինձ:

Խաղի ընթացքը. Երեխաներին ցույց ենք տալիս զինանշանը, որից հետո ընթերցում ենք զինանշանի վերաբերյալ փոքրիկ քառատող, ապա զրուցում ենք զինանշանի վրա պատկերված պատկերների մասին:

Բաժանում ենք զինանշանի վրա պատկերված պատկերներն կտրատված տարբերակով, որոնք երեխաները պետք է ն երկեն և համապատասխանությամբ դասավորեն զինանծանի պատկերներն ըստ նմուշի: Առաջինը վերջացնող սանը գա և փակցի նկարը համապատասխան տեղում:

Ապա ամփոփում ենք երեխաների ձեռք բերած գիտելիքները հարցերի միջոցով:

Մեր կարծիքով խաղային տեխնոլոգիայի միջոցով երախաներն ավելի հեշտությամբ և մեծ ոգևորությամբ են ընկալում տրված թեման:

Դիատրկող

Մեթոդիստի պարտականությունները կատարող՝ Հարությունյան Գայանե:

Դաստիարակին հաջողվեց հասնել պարապմունքի նպատակին: Մեծամասամբ երեխաների մոտ հաջողվեց զինանշանի պատկերը ճիշտ մտապահելու, արագ ներկելու և զինանշանի մասնիկները ճիշտ տեղում սոսնձելու կարողությունը:

Ընդհանուր պարապմունքը անցավ ուրախ և աշխույժ: Երեխաները ակտիվ էին, հետազոտության թեման ևս ճիշտ էր ընտրված, քանի որ ներկա ժամանակներում խիստ անհրաժեշտ է երեխաներին իրազեկել մեր հայրենիքի խորհրդանիշների մասին, տվյալ դեպքում՝ զինանշանի:

Թե նախադպրոցական և թե հանրակրթական բոլոր բնագավառներում սաների հայրաճանաչողության թեման խիստ կարևոր է և միտված է հայրենասիրության, ազգասիրության, հայրենանվիրության խնդիրներին:

Եզրակացություն

Ուսումնասիրելով համապատասխան գրականություն, կատարելով հետազոտություններ, մենք եկանք հետևյալ եզրահանգմանը.

1. Հայրենասիրական երգերը հսկայական զգացմունքային լիցք են պարունակում, որը թույլ է տալիս դիպչել տարբեր տարիքի երեխաների հոգուն: Այդ երգերը պարզ են, մեղեդային, ուստի երեխաները արագ սովորում են դրանք և սիրով ու ոգևորվածությամբ կատարում:
2. Երաժշտության դասերին հայրենասիրական երգերի ուսուցումը դառնում է բարոյականության, հայրենասիրության դաստիարակման լավագույն օրինակ, երեխաները ունկնդրում և կատարում են հայրենասիրական երգեր՝ ձեռք բերելով հարգանք ազգային-ազատագրական պայքարի հերոսների, ազգանվեր քաջերի ու զինվորների նկատմամբ և հպարտության զգացում սեփական ժողովրդի սխրանքի հանդեպ:
3. Այսպիսով, եկանք այն եզրահանգման, որ խաղը երեխայի հիմնական գործունեությունն է: Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը: Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է և նրա հետագա զարգացման հիմնական գրավականը: Միավորելով խաղային գործունեության սուբյեկտիվ արժեքը և զարգացնող օբյեկտիվ նշանակությունը, կարելի է եզրակացնել, որ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման ամենահարմար ձևն է:
4. Դաստիարակներին խորհուրդ կտանք, որ հաճախակի կազմակերպեն խաղ-պարապմունքներ հայրենաճանաչողության թեմայով, ինչպես նաև այլ թեմաներով, քանի որ խաղի միջոցով ուսուցումն էլ ավելի արդյունավետ և պատկերավոր է ընկալվում երեխաների կողմից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս.Մանկավարժություն.-Երևան, 2004
2. Մանուկյան Ս.Պ.Մանկավարժագիտություն.-Երևան, 2000
3. Նախադպրոցական մանկավարժություն. Է. Ա. Ալեքսանդրյանի խմբագրությամբ. - Երևան, 1992
4. Дошкольникам о защитниках отечества: методическое пособие по патриотическому воспитанию в ДОУ, под ред. Л. А. Кондрыкинской. М.. Сфера, 2006.
5. Патриотизм. Философский словарь. Крупнейший сборник онлайн-словарей. http://www.onlinedics.ru/slovar/fil/s/patriotizm.html
6. Татубаев С. С. Певческая речь как особый способ функционирования языка. Вопросы языкознания. 1982, № 2, с. 113-118.
7. Элконин Д.Б. Психология игры. - Москва, 1978